

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՎԱՆՈՒՀԻ ԳԱՌՆԻԿԻ ԲԱՂՄԱՆՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ժ 02.01-«Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ն. Հ. Դիլբարյան

Պաշտոնական

ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Ս. Մուրադյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Լ. Յուզբաշյան

Առաջատար

ՀՀ, Վանաձորի պետական համալսարան

կազմակերպություն՝

Պաշտպանությունը կայանալու է 2018 թվ. հունիսի 11-ին՝ ժամը 13:00-ին ՀՀ
ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ 019
Լեզվաբանության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան,
0015, Գրիգոր Լուսավորչի 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2018 թ. մայիսի 10-ին

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների

թեկածու, դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի և արտերկրի գիտական շրջանակներում Ն. Ադոնցի վաստակը քաջ հայտնի է, բայց նա առավելապես ճանաչված է իր պատմագիտական աշխատություններով, իսկ նշանավոր հայագետի լեզվաբանական հետազոտությունների զգալի մասը ցայսօր համախումբ չի քննվել և չի ներկայացվել և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ տարբեր գործոնների պատճառով: Ամենից առաջ պետք է նշել, որ Ն. Ադոնցի լեզվագիտական ըմբռնումները մեծ մասամբ ոչ թե առանձին աշխատությունների մեջ են հավաքված, այլ սփռված են հայկական սփյուռքի և եվրոպական տարբեր հանդեսներում՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն: Դրանց մի մասն անգամ ձեռագիր է, իսկ մի մասն էլ գտնվում է տարբեր պահոցներում: Հետևաբար Ն. Ադոնցի լեզվաբանական ժառանգության վերլուծությունը և համահավաք ներկայացումը հույժ արդիական է:

Այս ատենախոսությունն առաջին փորձն է՝ համակարգելու Ն. Ադոնցի լեզվաբանական ժառանգությունը և ընթերցող լայն զանգվածներին հասանելի դարձնելու այն, քանզի Ն. Ադոնցի վերժամանակյա գործերը ճանաչողական արժեք ունեն բոլորի համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է հավաքել, ուսումնասիրել և ներկայացնել Ն. Ադոնցի լեզվաբանական աշխարհասփյուռ գործերը: Ն. Ադոնցի հռչակը թեև համաշխարհային է, սակայն նա արժանիորեն չի գնահատվել Հայաստանում՝ պայմանավորված նրա աշխատությունների առեղծվածային անհետացմամբ (ըստ Պ. Հովհաննիսյանի՝ կրկնակի անհետացմամբ. առաջինը՝ 1937 թ. երկրաշարժի պատճառով, երկրորդը՝ նրա մահվանից հետո) և Խորհրդային Միության «փակ վարագույրներով», ուստի մեր նպատակն է հնարավորինս լիարժեք ուսումնասիրել հայագետի լեզվաբանական գործերը և ըստ արժանվույն ներկայացնել դրանք՝ ընթերցողների ուշադրությունը հրավիրելով հայանվեր գիտնականի գործունեության ամենաուշագրավ կողմերից մեկի՝ լեզվաբանական հետազոտությունների վրա:

Այս նպատակն իրագործելու համար լուծել ենք հետևյալ խնդիրները.

ա) Տարբեր աղբյուրներից՝ գրքեր, թերթեր, ամսագրեր, հավաքել, քննել և համադրել ենք Ն. Ադոնցի կյանքին, գործունեությանն առնչվող բոլոր պատահիկները՝ փորձելով առաջին հերթին բացահայտել գիտնականի կյանքի որոշ անհասկանալի կողմեր՝ կապված նրա շիրիմի և արխիվի անհետացման, իսկ այսօր՝ արխիվի՝ դաշնակցականների հսկողության տակ լինելու հանգամանքի հետ:

բ) Նկարագրել ենք Ն. Ադոնցի՝ հայ և օտար մամուլում, տարբեր գրքերում սփռված հոդվածները, մենագրությունները, դրանցից դուրս բերել լեզվաբանական բոլոր դիտարկումները, համեմատել համանման այլ հետազոտությունների հետ, կատարել եզրակացություններ:

գ) Հայագետի պատմագիտական գործերից դուրս ենք բերել լեզվաբանական վերլուծությունները՝ դիցանունների, անձնանունների, տեղանունների, տոհմանունների, հասարակ անունների ստուգաբանական բառաքննությունները:

Այս բոլոր աշխատանքները լրացնելու համար Erasmus+ միջազգային ծրագրով գործուղվել ենք Բրյուսել, որտեղ ապրել ու գործել էր Ն. Ադոնցը, Լյուվեն լա Նյով քաղաքի համալսարանի (UCL) գրադարանից և Բրյուսելի Ազատ համալսարանի (ULB)՝ Ն. Ադոնցի արխիվից վերցրել ենք նրա գործերը, թվայնացրել, ուսումնասիրել և բերել Հայաստան: Ն. Ադոնցի՝ Հայաստանում և Բելգիայում գտնվող գործերի հիման վրա Բելգիայում կազմել ենք գիտնականի մատենագիտությունը, որը տրված է մեր աշխատանքի հավելվածում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Այս ատենախոսությամբ առաջին անգամ է ներկայացվում Ն. Ադոնցի կյանքն ու գործունեությունն ամբողջությամբ, և այն գիտնականի լեզվաբանական ժառանգության քննության առաջին օրինակն է: Փորձ է արվում լիարժեք համակարգել հայագետի լեզվաբանական ուսումնասիրությունները՝ երբեմն առանձին մենագրությամբ, երբեմն՝ այս կամ այն ուսումնասիրության մեջ հատվածներով՝ մեկ-երկու նախադասությամբ վկայված:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Ն. Ադոնցի յուրաքանչյուր աշխատություն՝ անկախ բնագավառից, լեզվաբանական նորոյթների շտեմարան է, քանի որ նրա մեկնությունները խորքային են, փաստարկված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ն. Ադոնցը նախ ներկայացվում է որպես հայ քերականագիտության պատմության հիմնադիր, նշանակում է՝ անաչառորեն պետք է վերանայվի մեր քերականագիտության պատմությունը՝ առաջին պլան մղելով փաստերը, երկրորդ պլան՝ դարերով շրջանառվող կարծիքները:

Ն. Ադոնցի լեզվաբանական ինքնատիպ ուսումնասիրությունները հավաքելով և ներկայացնելով այս ատենախոսության մեջ՝ հայագետներին հետազոտության հսկայական նյութ ենք ընձեռում՝ քննելու նրա ինքնօրինակ ստուգաբանությունները և տեղանվանագիտական-տոհմանվանագիտական ուսումնասիրությունները, դրանք համեմատելու լեզվաբանական նմանօրինակ հետազոտությունների հետ, որոնելու նոր հիմքեր, փաստեր՝ եղածները հարստացնելու և առավել զարգացնելու:

Որպես աշխատանքի ամփոփում՝ ստեղծել ենք «Նիկողայոս Ադոնց» խորագրով կայքէջ (<https://nikoghayosadonzblog.wordpress.com/>), որտեղ համակարգել ենք գիտնականի մասին տարաբնույթ տեղեկատվություն՝ նրա և նրա լեզվաբանական ուսումնասիրությունների վերաբերյալ մեր հոդվածները, մեր կազմած մատենագիտությունը՝ Հայաստանում և Բելգիայում գտնված նրա աշխատությունների հիման վրա, ինչպես նաև Բելգիայում գտնվող նրա օտարալեզու գործերի թվայնացված տարբերակները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սույն ատենախոսության համար նյութ են ծառայել Ն. Ադոնցի՝ Հայաստանում գտնվող բոլոր գործերը՝ ամփոփված նրա Երկերի յոթհատորյակում, նրա հեղինակած առանձին աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև տարբեր թերթերում, հանդեսներում նրա մասին տեղ գտած հրապարակումները, նամակները և այլն:

Աշխատանքը կատարվել է մի քանի մեթոդների կիրառմամբ: Համակցվել են նկարագրական, զուգադրահամեմատական, լեզվաբանական և աշխարհագրական վերլուծության մեթոդները: Հիմնական մեթոդը նկարագրականն է, որի օգնությամբ բացահայտել ենք Ն. Ադոնց լեզվաբանին, նրա հետազոտությունների ոլորտները՝ տեղանվանագիտություն, տոհմանվանագիտություն, բառաքնություն, իսկ համեմատական, վերլուծական

մեթոդների, միջոցով պարզել ենք գիտնականի լեզվաբանական ժառանգության արդիականությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի Հայոց լեզվի պատմության ամբիոնում և երաշխավորվել պաշտպանությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կազմված է «Ներածություն»-ից, երեք գլուխներից՝ իրենց ենթագլուխներով, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածից:

Ներածություն

Ներածական բաժնում ընդհանուր տեղեկություններ են տրվում Ն. Ադոնցի կենսագրության, նրա գիտական ժառանգության մասին: Այստեղ ներկայացվում են այն մեթոդները, որոնք կիրառել է Ն. Ադոնցն իր ուսումնասիրություններում, նրա գիտական հայեցակարգը, հետազոտությունների ոլորտները, աղբյուրագիտությունը:

Շարադրանքը կառուցված է բազմազան աղբյուրների տվյալների հիման վրա՝ ժամանակակիցների հոդվածներ, հարցազրույցներ ամսագրերից, օրաթերթերից, գրքերի, աշխատությունների նախաբաններ, Ն. Ադոնցի անձնական նամակագրությունը և հուշագրությունը:

Նշենք, որ Ն. Ադոնցի հույժ արժեքավոր լեզվաբանական մի շարք գործեր դեռևս անհասանելի են, ինչպես օրինակ, «Արմատական բառարանը»՝ 92 բառահոդվածով, Հայ-վրացերեն բառարանը, «Հայոց լեզուի փոխյարաբերությունները իրանական և հաբեթական լեզուների հետ», «Հայոց լեզուի ծագումը», «Մուշի բարբառը», «Հայրենի քերականություն»

աշխատությունները, որոնց մասին ակնարկել է Ն. Ադոնցի երկերի ժողովածուի կազմող և հրատարակիչ, նվիրյալ ադոնցագետ Պ.Հովհաննիսյանը:

Գլուխ 1. Ն. Ադոնցի հետազոտությունները հայ քերականագիտության և հայոց լեզվի պատմության հիմնահարցերի վերաբերյալ

Այս գլխում ներկայացված են Ն. Ադոնցի՝ հայ քերականագիտության պատմության և հայերենագիտության բազմաբնույթ հարցերին առնչվող աշխատությունները: Գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնցում առանձին-առանձին քննվել են 5-րդ դարում սկզբնավորված հայ քերականագիտական երկերի՝ Ն. Ադոնցի կազմած քննական-համեմատական բնագրերը, հայոց լեզվի ծագման և բնույթի մասին մեծ հայագետի ըմբռնումները, մաշտոցյան գրերի գյուտի նախապատմությանը վերաբերող օտար և հայկական աղբյուրների զուգադրահամեմատությունը, հայերենի և ուրարտերենի փոխհարաբերությունները:

1.1. Ն. Ադոնցը հայ քերականագիտության պատմության հիմնադիր. ատենախոսության այս ենթագլուխը նվիրված է Ն. Ադոնցի «Դ. Թրակացին և նրա հայ մեկնիչները» աշխատության վերլուծությանը: Նշանավոր այս երկը փաստացի համարվում է հայ քերականագիտության պատմության հիմնաքար: Ն. Ադոնցը տարբեր ձեռագրերի հիման վրա վերականգնել, ծանոթագրել է Դ. Թրակացու երկի հայերեն թարգմանության և նրա առաջին հայ մեկնիչների գործերի քննական ամբողջական բնագրերը, որոնց շնորհիվ հայ քերականագիտության պատմությունը մեծ զարգացում ապրեց:

Այս ենթագլխում զուգադրական քննության ենթ ենթարկել Գ. Զահուկյանի և Ն. Ադոնցի երբեմն իրարամերժ թվացող կարծիքները Դ. Թրակացու երկի հայերեն թարգմանության հեղինակների և նրանց մեթոդաբանության մասին: Ի վերջո, գալիս ենք այն ընդհանուր եզրահանգման, որ Գ. Զահուկյանի և Ն. Ադոնցի ըմբռնումները Դ. Թրակացու երկի հայ թարգմանիչների և մեկնիչների առումով փոխլրացնող են: Ուշագրավ է Ն. Ադոնցի հետազոտությունից բխող այն պնդումը, որ Դ. Թրակացու երկը երեք անձերի թարգմանություն է՝ երեք ձեռագրերով վկայվող, երեք նշանավոր հայ քերականների, որոնք

թարգմանությունից հետո ձեռնամուխ են եղել ինքնուրույն մեկնությունների ստեղծմանը՝ արդեն հայերենի հիմքի վրա:

1.2. Ն. Աղոնցի դիտարկումները հայոց լեզվի բնույթի վերաբերյալ. Ն. Աղոնցին մշտապես հետաքրքրել է հայոց լեզվի բնույթի հարցը, և իր ժամանակի լեզվաբանական նվաճումների հիման վրա հայագետը մի ողջ տեսություն է մշակել: Ըստ Ն. Աղոնցի՝ հայերենը մեկն էր ժամանակին առկա բարբառներից (ենթադրաբար նոստրատիկ), որը սերտ հարաբերություններ և ընդհանրություններ ուներ ինչպես հնդեվրոպական, այնպես էլ սեմական և կովկասյան տարբեր լեզուների հետ:

Նա անդրադարձել է նաև հայերենի շրջանաբաժանմանը՝ սկսյալ գրաբարից: Ն. Աղոնցն առաջինն էր, որ գրաբարը բաժանեց երեք փուլի՝ առանձնացնելով հունաբան հայերենը: Աղոնցյան շրջանաբաժանումն ունի հետևյալ պատկերը.

1. Գրաբար՝ V-X դդ.

ա) դասական-V-VII դդ.

բ) հետդասական-հունաբան ուղղվածությամբ՝ VII-VIII դդ.

գ) անկման շրջան- IX դ.

2. Կիլիկյան կամ աշխարհիկ-ռամկական հայերեն՝ XI-XVIII դդ.

3. Երկճյուղ աշխարհաբար՝ XIX դ.-ից 40-ական թթ.:

Ն. Աղոնցի այս տեսության հիման վրա հետագայում իրենց տեսությունները զարգացրին Հր. Աճառյանն ու Գ. Ջահուկյանը:

1.3. Ն. Աղոնցի դիտարկումները Մ. Մաշտոցի, գրերի գյուտի և Կորյունի վարքագրության վերաբերյալ. այս ենթագլուխը հիմնված է Ն. Աղոնցի՝ «Հանդես ամսօրեայ»-ում տպագրված հոդվածի վրա, որտեղ նա նոր լույսով է դիտարկում գրերի գյուտի պատմությունը՝ այն տեղափոխելով, ի հակադրություն ընդունված տեսության, չորրորդ դարավերջ՝ դրանով իսկ վերանայելով ու շտկելով Վռամշապուհի թագավորության տարիները նույնպես, բացահայտելով Մ. Մաշտոցի իրական կերպարը, նրա առնչությունները նեստորականության ներկայացուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու հետ և նշելով, որ Մ. Մաշտոցի այցը Ամիդ և Եդեսիա ոչ մի առնչություն չի ունեցել գրերի գյուտի հետ և ճանաչողական բնույթ է կրել:

1.4. Ն. Ադոնցը ուրարտագետ. Ն. Ադոնցն առաջինն է խոսում այն մասին, որ Հյուսիսային Միջագետքում հայտնաբերվել է մի լեզու, որը շատ նման է ուրարտերենին: Այդ լեզվի՝ *միտրաննի* կոչվող բարբառով է գրվել Եգիպտոսի փարավոն Ամենֆիս III-ին ուղղված Միտաննիի Թուշրաթթա թագավորի նամակը: Ն. Ադոնցը գրում է, որ առավելապես նախընտրում են այդ լեզուն անվանել *խուրրիերեն* և ոչ *միտրաններեն*: Այդ լեզվով խոսող ժողովրդի ինքնանվանումը *խուրրի* է: Նրանք զբաղեցնում էին ամբողջ Վերին Միջագետքը, որտեղ էլ հիմնել էին Միտաննի պետությունը:

Գլուխ 2. Ն. Ադոնցը տեղանվանագետ և տոհմանվանագետ

Ատենախոսության այս գլխում ներկայացված են հայագետի տեղանվանագիտական և տոհմանվանագիտական ծավալուն ուսումնասիրությունները՝ ի մի բերված մեր ձեռքի տակ եղած նրա բոլոր աշխատություններից: Տեղանունները քննելիս Ն. Ադոնցը հիմնականում կիրառում է նկարագրական մեթոդը՝ յուրաքանչյուր տեղանուն նկարագրելով նախ տեղագրական տեսանկյունից, անհրաժեշտության դեպքում անդրադառնալով նաև նրա լեզվական բնութագրիչներին: Նույն սկզբունքն է կիրառվում նաև տոհմանունների ուսումնասիրության ժամանակ: Հին հունարենի, պարսկերենի, ասորերենի, վրացերենի գերազանց իմացությունը թույլ էր տալիս Ն. Ադոնցին հնչյունական և իմաստաբանական ընդհանրություններ բացահայտել մեր տարածաշրջանի հատուկ անունների դաշտում:

Այս գլուխը նույնպես բաղկացած է հետևյալ ենթագլուխներից.

2.1. Հայկական հնագույն տեղանուններ. այս ենթագլխում ամփոփված են հայագետի քննած հայկական տեղանունները՝ աշխարհագրական և լեզվական բնութագրիչներով՝ ի մի բերված հիմնականում երկու հիմնարար աշխատություններից՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», «Հայաստանի պատմություն»: Բոլոր տեղանունները, ըստ նրանց աշխարհագրական դիրքի, ներկայացրել ենք աղյուսակի տեսքով՝ առավել ակնհայտ դարձնելով գիտնականի կատարած աշխատանքի վիթխարի ծավալը և դյուրացնելով հետագա ուսումնասիրողների աշխատանքը: Կարևորել ենք հայոց պատմության տեսանկյունից վճռորոշ մի շարք տեղանունների ստուգաբանական մեկնությունները, ինչպիսիք են, օրինակ, *Աշտիանենե*, *Ակիլիսենե*, *Ծոփք*, *Օրսա*, *Ադին*, *Վարսապա*, *Վասպուրական*, *Ուրարտու* և այլն: Ն. Ադոնցը Ak-ilis-ene-ն, օրինակ, կազմությամբ հարազատ է համարում daran-ali-ին, man-ali-ին, mard-ali-

ին, այսինքն, ըստ նրա, տեղանունը բաղկացած է Ake-ից և ali-ից՝ *ակե-աղի: Ն. Ադոնցը քիչ հավանական է համարում, որ alis-ը առաջացած լինի հայերեն աղի բառից. նա հիմնավորում է, որ *ali-ն ածականակերտ ածանց է, որ նախագրաբարյան ծագում ունի և համազոր է գրաբարյան -եղ-ին: Ըստ այդմ՝ Մարդ-աղի պարզապես նշանակում է Մարդ-յան, Ակ-իլիսենե՝ Ակիյան:

2.2. Հայկական տոհմանուններ. «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մեծարժեք աշխատության մեջ Ն. Ադոնցը քննում է հայոց տոհմանունները՝ ուսումնասիրությունը հարստացնելով պատմահայր Մ. Խորենացու պատմության տվյալներով, քանի որ նրա պատմությունը նախարարությունների պատմությունը շարադրելու առաջին լուրջ փորձն է: Մ. Խորենացու հաղորդած տվյալները նա համեմատում է պատմական խիստ կարևոր փաստաթղթերի՝ Գահնամակների և Ջորանամակների ընձեռած նյութի հետ՝ մի կողմից քանակական հստակեցումներ կատարելով, մյուս կողմից՝ հատկանվանագիտական ուշագրավ ստուգաբանություններ կատարելով:

Ն. Ադոնցը նկարագրական առումով անդրադառնում է հայոց գրեթե բոլոր տոհմանուններին, բայց լեզվաբանական տեսանկյունից քննում է միայն մի քանիսը, որոնցից են Մամիկոնյան-ը, Բագրատունի-ն, Արծրունի-ն, Մարդաբետական-ը, Մուրացան-ը, Արշակունի-ն և այլն: Ն. Ադոնցի հաղորդմամբ՝ Βαγαδάτης անունը լեզվական անկանոնությունների դեռևս չենթարկված հայկական Բագա-րատ-ի՝ Bagarata-ի սկզբնական ձևն է, որ ծագում է Bagadata-ից՝ աստծու տված՝ бага-ից և data-ից-հուն. Θεόδοτος: Ն. Ադոնցը հակված է ստուգաբանական կապ գտնելու նաև Բագարատ-ի և Բագրևանդ-ի միջև:

Գլուխ 3. Ն. Ադոնցի ստուգաբանությունները և հնչյունաբանական ու բառաքերականական դիտարկումները

Ն. Ադոնցի հայագիտական ազդեցիկ ժառանգության մեջ կարևորագույն տեղ են զբաղեցնում նրա ստուգաբանությունները. Պ. Հովհաննիսյանը վկայում է, որ պահպանվել է Ն. Ադոնցի ստուգաբանական բառարանը՝ 92 բառահոդվածից բաղկացած: Այն գտնվում է Բեյրութի Համազգայինի գրական պահոցում, սակայն, ցավոք, դեռևս հասանելի չէ ուսումնասիրողներին:

Եթե Ն. Ադոնցի տեղանվանագիտական ուսումնասիրությունները Հայաստանի և արտերկրի գիտական շրջանակներում հանրահայտ են, հաճախ մեջբերվող, ապա նույնը չենք կարող ասել նրա՝ անձնանունների, դիցանունների, հասարակ անունների ստուգաբանական դիտարկումների վերաբերյալ, որոնք ոչ միայն պատմական, այլև գիտական մեծ արժեք ունեն անգամ 21-րդ դարում՝

իրենց ինքնատիպության և խորքային բովանդակության շնորհիվ: Ն. Ադոնցը, կարելի է ասել, երբեք չի պաշտպանել կրկնվող տեսություններ և ոչ մի բնագավառում, անգամ առանձին բառերի ստուգաբանության հարցում նա գրեթե երբեք չի կրկնում նախորդներին և դա ոչ թե տարբերվելու նպատակով, այլ ինքնատիպ մտածողության, հին ու նոր բազմաթիվ լեզուների քաջիմացության շնորհիվ:

3.1. Դիցանուններ. Ն. Ադոնցի համոզմամբ՝ «գրադվել թաղված աստվածներով այնպիսի ժամանակ, երբ կենդանի աստվածներն են նաև ոչինչ համարվում, գուցե և ունայն աշխատանք է: Սակայն աստվածուհիությունը ոչ թե միայն բարոյական լքումի նշան է, այլ և ինքնակոծության վատթար տեսակը»: Առաջնորդվելով այս սկզբունքով՝ նա քննում է հայոց դարավոր դիցարանը, բարձրացնում հատկապես մի քանի դիցանունների ստուգաբանության հարցեր, որոնք խիստ արժեքավոր են ոչ միայն լեզվաբանական, այլև ընդհանուր մշակութաբանական, ազգագրական և բանահյուսական տեսանկյուններից: Հայագետը մեծ հետևողականությամբ հետազոտել է Արայի, Շամիրամի, Տորք Անգեղի, Սանդարամետի անունները՝ աղերսներ գտնելով հայ և օտար դիցանունների միջև: Ն. Ադոնցը, օրինակ, նկատում է ուշագրավ մի փաստ. Մակաբայեցվոց գրքում (Բ. 6,7) հունարեն բնագրի *Դիոնիսոս*-ը թարգմանված է հայերեն *Սպանդարամետ*: Ըստ Ն. Ադոնցի՝ Դիոնիս-Սպանդարամետը, իբրև երկրին կապված աստվածություն, իր էությամբ մոտենում է հայ Արային: Եթե ճշմարիտ է Բարթոլոմեի ստուգաբանությունը, ապա, նրա համոզմամբ, Արա-ն ոչ միայն պաշտամունքի բովանդակությամբ, այլև լեզվական տեսակետից նույնացվում է (Սպանդ)-Արա-մետ-ի հետ՝ որպես նրա կրճատ ձևը:

3.2. Անձնանուններ. Ն. Ադոնցը քննում է հիմնականում օտար անձնանունները՝ դրանցից հաճախ բխեցնելով հայկական տարբերակները կամ սկզբնաձևերը, նախատիպերը:

Մեր հատկանվանագիտության պատմության տեսանկյունից հատկապես կարևոր է Մեսրոպ Մաշտոցի անվան ստուգաբանությունը: Ըստ Ն. Ադոնցի՝ Մեսրոպ անունը բաղադրվել է Միթր-Միիր աստվածության անունից և -սրովք արմատից, որ հանդես է գալիս նաև Խոսրով անվան մեջ և փոխառյալ դ-սրով բառից, որ համապատասխանում է սլավոնական՝ *сробо*, հունարեն՝ *κλέος* բառերին և իրոք նշանակում է *խոսք, գովք*, այսինքն՝ *Մեհսրովք, Մեսրոպ* նշանակում է *Միիր գովող, փառաբանող*:

Մաշտոց անունը, Ն. Ադոնցի համոզմամբ, առնչվում է իրանական *Μάσιστος* անվանը, որ հիշատակում է Հերոդոտոսը՝ Քսերքսեսի զորականների շարքում: *Masistus*-ը գերադրական աստիճանն է *mas-*, հունարեն *μακ-ρός* «երկար» բառի, ուրեմն՝ *masišta* նշանակում է *ամենից երկար*: Ըստ Ն. Ադոնցի՝ կարող է լինել նաև գերադրական և *maz՝ մեծ* բառի, *mazišta՝ ամենամեծ*: Երկու դեպքում էլ հայերենում սպասելի է *Մաշտ*- հիմնածևը՝ համաձայն իրանականի:

3.3. Հասարակ անուններ. այս ենթազբառում Ն. Ադոնցի բառաքննական մեկնություններն ենք վերլուծել, որոնցից յուրաքանչյուրը վկայում է համաշխարհային պատմության, բանահյուսության, առասպելաբանության և լեզուների նրա խոր իմացության մասին: Շարադրանքի հիմքում ընկած են Ն. Ադոնցի՝ տարբեր տարիներին գրված հոդվածներից, աշխատություններից հավաքված ստուգաբանական դիտարկումները, հետաքրքիր, չկրկնվող մեկնությունները, որոնք, կարծում ենք, հավաքված կլինեն երջանկահիշատակ ադոնցագետ Պ. Հովհաննիսյանի հիշատակած ստուգաբանական բառարանում: Նույն ենթազբառում քննել ենք նաև մի շարք փոխառությունների վերաբերյալ Ն. Ադոնցի հնչյունական և իմաստաբանական վերլուծությունները, որոնք տեղ են գտել գիտնականի տարբեր հոդվածներում: Նշենք նաև, որ հայագետն իր ստուգաբանությունները երբեք չի համարել վերին ատյանի ճշմարտություններ: Նրա քննությունները միշտ ծավալվում են *կարծում ենք, ենթադրում ենք* և նման այլ արտահայտություններով, սակայն այդ ստուգաբանությունները կուռ տրամաբանությամբ ու փաստերի անառարկելի համադրությամբ են կառուցված, և հակափաստարկ փնտրելն անգամ երբեմն անիմաստ է թվում: Այստեղ արձանագրել ենք այնպիսի բառերի ադոնցյան ստուգաբանությունները, ինչպիսիք են, օրինակ, *դասնեակ, նկարագիր, նշանագիր, հրահանգ* և այլն: Ն. Ադոնցը ենթադրում է, որ *Փարանգիոն*-ը (հիշատակված Պրոկոպիոսի կողմից) թերևս հենց *հանք* է նշանակում, և տալիս է համապատասխան ստուգաբանություններ՝ համեմատելով *farhangion*-ը հայ-իրանյան *հրահանգ* բառի հետ: Նա իրավամբ նկատում է, որ պարթևական *frahang* բառը հայերենում ի հայտ է գալիս իբրև *հրահանգ*, իսկ պարսկերենում՝ *farhang*, ինչպես որ պարթևական *frahat* անունը հայերենում՝ Հրահատ, պարսկերենում՝ Farhad կամ պարթև *framan*, հայերեն՝ հրաման, պրսկ.՝ *farman*:

Անդրադարձել ենք նաև Ն. Ադոնցի կողմից հարկանունների քննությանը՝ *սակ, բաժ, հարկ, խարաջ, կոռ, գզաթ*: Գիտնականի համոզմամբ՝ *baž*-ը, հայերեն՝ բաժ, նշանակում է բաժին, ինչպես որ հունարեն *δασμος*-ը՝ *δαίωμα*-ից՝

բաժանել=բաժին և հարկ: Ն. Ադոնցը կարծում է, որ նրանից է ծագում նաև bahra-k-ը:

3.4. Տիտղոսներ. այս ենթագլխում ներկայացրել ենք Ն. Ադոնցի քննած *մայխազ, ասպետ, տեր, մամակ* տիտղոսները: *Մայխազ*-ը, որ ծագում է ասորական malxazu-ից կամ արաբական melik-ից, Խորխոռունի իշխանների տոհմական տիտղոսն էր և նշանակում էր *տիրորդ*: *Ասպետ* տիտղոսը պատկանում է Բագրատունի իշխաններին: Ն. Ադոնցի կարծիքով՝ նշյալ բառը կազմված է as և pet բաղադրիչներից, որոնցից երկրորդը նշանակում է *զլուխ*, իսկ առաջինը փորձում է համեմատել նախարարական կենցաղից վերցրած մի այլ տերմինի՝ se-pah՝ սեպուհ-ի առաջին վանկի հետ:

Տէր-ը Ն. Ադոնցն ածանցված է համարում *տի*-ից և *այր*-ից: Երկրորդ մասը հայոց լեզվում նշանակում է *մարդ, այր*, իսկ *տի*-ի իմաստը, ըստ նրա, գրեթե անըմբռնելի է:

Մամակ-ը, Ն. Ադոնցի կարծիքով, ոչ այլ ինչ է, քան իբերական mama՝ *հայր* բառի հայացված ձևը:

3.5. Ն. Ադոնցի հնչյունաբանական և բառաքերականական դիտարկումները. Ն. Ադոնցի նմանատիպ ուսումնասիրությունները հանդիպում են նրա յուրաքանչյուր աշխատության մեջ, սակայն հատկապես ամփոփված են նրա «Գրական նշմարներ լեզվական ուղղագրական» հետազոտության մեջ: Այստեղ նա անդրադարձ է կատարում ուղղագրական բարեփոխումներին, կատարում իր դիտարկումները, խիստ ուշագրավ մեկնաբանություններ տալիս *վ* կրավորական ածանցի, *ի* նախդրի ծագմանը: Հատկանշական են գիտնականի վերլուծությունները *ամեն* և *չեզոք* բառերի ուղղագրության, ինչպես նաև մի շարք փոխառյալ բառերի քննության ոլորտում:

Եզրակացություններ

Ն. Ադոնցի լեզվաբանական ժառանգության ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ եզրակացությունների.

1. Ն. Ադոնցի լեզվաբանական ժառանգության ամենահայտնի աշխատությունը «Дионисий Фракийский и его армянские толкователи» ռուսերեն հետազոտությունն է, որի շնորհիվ նա դարձավ հայ քերականագիտության պատմության հիմնադիրներից մեկը: Այս աշխատանքն իր բացառիկ արժեքի

շնորհիվ թարգմանվել է ֆրանսերեն և հայերեն: «Դիոնիսիոս Թրակացին և Նրա հայ մեկնիչները» երկի կարևորությունը պայմանավորված է այն վճռորոշ հանգամանքով, որ բացի տեսական կարևոր վերլուծություններից՝ աշխատությունը գործնական եզակի սկզբնաղբյուր է հայ քերականագիտության հնագույն և հին շրջանների ուսումնասիրողների համար:

2. Ն. Ադոնցի լեզվաբանական հետաքրքրությունների շրջանակում լուրջ տեղ է գրավել հայոց լեզվի բնույթի խնդիրը: Նա փորձել է բացահայտել Հ. Մյուլլերի, Պոլ դը Լագարդի, Ֆ. Վինդիշմանի, ապա Հ. Հյուբշմանի հայագիտական տեսությունների բացթողումները: Այս հարցում Ն. Ադոնցը հետևում է իր ուսուցիչ Ն. Մառին՝ հայերենում փաստացի վերականգնելով կովկասյան և սեմական մեծ ենթաշերտեր:

3. Հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման խնդիրը ևս մտահոգել է անվանի հայագետին: Ն. Ադոնցը կատարել է դասական հայերենի ուշագրավ շրջանաբաժանում՝ դասական գրաբարից առանձնացնելով հունաբան հայերենը: Նրա կարծիքով, հին հայերենով ավանդված սկզբնաղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ գրաբարի բառապաշարը և քերականությունը կրել են հիմնականում երկու լեզուների ազդեցություն՝ հին շրջանում՝ ասորապարսկական, և նոր շրջանում՝ հունական:

4. Ն. Ադոնցն առաջինն էր, որ քննական հայացքով վերանայեց Մ. Մաշտոցի կենսագրությունը և հայոց գրերի գյուտի պատմությունը՝ օտար աղբյուրների ընձեռած նյութերի հիման վրա փորձելով վերականգնել մեր պատմության ամենավճռական փուլերից մեկի ժամանակագրությունը՝ անկախ դավանաբանական իրողություններից:

5. Իր լեզվագիտական աշխատությունները Ն. Ադոնցը գրել է մեթոդաբանական հստակ մշակված հիմքի վրա: Պատմահամեմատական, վերականգնման և արտահարաբերման մեթոդների օգնությամբ հայագետը կարողացել է այնպիսի ստուգաբանություններ և բառաքննական դիտարկումներ կատարել, որոնք իրենց արդիականությունը չեն կորցրել ցայսօր:

Ն. Ադոնցի սկզբունքներից մեկը, որով նա տարբերվում է մյուս ուսումնասիրողներից, հետազոտության առարկայի արտաքին ձևի փոխարեն ներքին բովանդակության վերականգնումն էր և դեպքերի, իրադարձությունների հետ մեկտեղ՝ դեմքերի ու անձանց նկարագրությունը:

6. Հայագետի լեզվաբանական ժառանգության մեջ կարևորագույն տեղ են զբաղեցնում տեղանվանագիտական և

տոհմանվանագիտական հետազոտությունները: Յուրաքանչյուր տեղանուն Ն. Ադոնցը քննում է նախ տեղագրական տեսանկյունից, ապա տեղագրությունը լրացնում է հատկանունների լեզվաբանական բնութագրիչներով:

7. Լեզվի հին և նոր վիճակների, դրանց փոխհարաբերությունների վերաբերյալ Ն. Ադոնցի պնդումները գիտական և մշակութաբանական մեծ արժեք ունեն. «Հին լեզվից շատ բան անցել է նորին, շատ բան էլ քարացել, մեռել է: Ասել՝ որ մեռածից ոչինչ չի կարելի կամ պետք չէ կենդանացնել՝ թերմտություն է: Մեր բարձր ձգտումը պիտի լինի հանել փլատակներից փայլուն գոհարները, և հին լեզվական գանձը գործադրել նոր լեզվի շինության համար... Առաջադիմել միշտ չի նշանակում հինը մոռանալ. ճշմարիտ առաջադիմությունը նման է մի փախստականի, որ վազելիս անդադար հետ է նայում»:

Մեր արենախոսության հավելվածում զեպտեղել ենք Ն. Ադոնցի մատենագիտությունը:

Ատենախոսության վերաբերյալ հրատարակվել են՝

1. Բաղմանյան Վ., Հայկական հնագույն տեղանունները Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» գրքում, ԵՊՀ, ՌԻԳԸ Գիտական հոդվածների ժողովածու, 1.2 (12), Երևան, 2016, էջ 95-100:

2. Բաղմանյան Վ., Ն. Ադոնցի հնչյունաբանական և բառաքերականական դիտարկումները, ԵՊՀ, ՌԻԳԸ Գիտական հոդվածների ժողովածու, 1.2 (12), Երևան, 2016, էջ 101-106:

3. Բաղմանյան Վ., Ն. Ադոնցը և Գ. Ջահուկյանը հայ քերականագիտության պատմության հիմնադիրներ, Հայագիտական հանդես, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 3 (33), Եր., 2016, էջ 17-28:

4. Բաղմանյան Վ., Հայոց տոհմանունների իմաստաբանական դաշտը ըստ Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» գրքի, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 5-րդ գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2015, էջ 83-94:

5. Բաղմանյան Վ., Ն. Ադոնցի կյանքի ուղին, Բանբեր ԵՊՀ-ի, 2016, էջ 110-121:

6. Բաղմանյան Վ., Ն. Աղոնցը անձնանունների ստուգարան, ԵՊՀ, ՈՒԳԸ հոդվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 181-193:

БАГМАНЯН ВАНУИ ГАРНИКОВНА

ЛИНГВИСТИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ Н. АДОНЦА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 «Армянских язык»

Защита состоится 11 июня 2018 г. в 13:00 часов, на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка имени Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича)

РЕЗЮМЕ

В научных кругах Армении и зарубежья хорошо известны труды Н. Адонца, но он наиболее узнаваем благодаря своим историографическим работам, лингвистические исследования известного арменоведа до сих пор системно не анализировались из-за влияния ряда как объективных, так и субъективных факторов. Прежде всего нужно отметить, что лингвистические концепции ученого в большей части сконцентрированы не в отдельных трудах, а представлены в разных периодических изданиях армянской диаспоры и Европы: на армянском, русском, французском, немецком языках, некоторая часть еще не опубликована, а другая – находится в различных архивах. Следовательно, систематизация и объединенное представление лингвистического наследия Н. Адонца весьма актуально. Научная новизна диссертации обусловлена именно вышеизложенным обстоятельством: жизнь и деятельность Н. Адонца, языковедческие и этимологические концепции впервые оцениваются и систематизированно сопоставляются. Мы предприняли попытку наиболее целостно представить лингвистические исследования арменоведа; часть из них находится в разных историографических исследованиях, переплетаясь с филологическими описаниями, но их значение очень весомо. Н. Адонц относится к числу тех ученых-гигантов

прошлого века, которые в силу своего таланта и энциклопедических знаний объединяли гуманитарные науки – филологию, историю, мифологию, народный фольклор.

Диссертация состоит из вводной части под заголовками «Два слова» и «История вопроса», следующих за ними трех глав, каждая из которых имеет свои подразделы, заключения, список литературы. К диссертации прилагается Приложение.

В главе «Два слова» даются общие сведения о жизни, научной, педагогической и общественной деятельности Н. Адонца. Здесь сформулированы методологические основы и источники диссертации. В разделе «История вопроса» на основе различных источников мы восстановили биографические факты жизни и деятельности Н. Адонца.

Первая глава работы – «Исследования Н. Адонца об армянской грамматике и об основах истории армянского языка» – состоит из четырех подразделов, целиком посвящена лингвистическим воззрениям Н. Адонца. В главе представлены грамматические исследования, заслуживающие внимание филологические наблюдения, касающиеся пятого века, в частности, создания армянской письменности, – все они базируются на армянских и иноязычных первоисточниках.

Во второй главе – «Н. Адонц – топонимист и исследователь этнонимии» – наиболее полно рассматриваются и оцениваются топонимические и этнонимические подходы ученого. Армянская топонимика и преимущественно этнонимика – малоисследованные научные направления, поэтому наблюдения Н. Адонца в этих областях имеют фундаментальное значение.

Третья глава – «Этимологические, фонетические и грамматические исследования Н. Адонца» – относится к важнейшим концепциям ученого в области этимологии и грамматики. Здесь мы обратились к этимологическому толкованию теонимов, антропонимов, имен нарицательных, титулов, также к орфографическим реформам, исследованию становления армянского алфавита, своеобразному анализу заимствованных слов.

В конце заключение и список литературы.

К диссертации прилагается приложение, где собраны толкования Н. Адонца иноязычных антропонимов и топонимов, также составленная нами

библиография, где представлен список всех найденных в Армении и Бельгии трудов.

По теме исследования нами опубликовано шесть статей, еще три находятся в процессе публикации.

Как важный результат нашей работы нужно рассматривать создание веб-сайта под заголовком «Николайос Адонц», здесь мы систематизировали наши статьи об ученом и его исследованиях, библиографию, оцифрованные нами в Бельгии иноязычные работы ученого, которые до сих пор не были доступны в Армении. Таким образом мы попытались сделать доступной для научной и широкой читательской аудитории любую информацию, касающуюся выдающегося арменоведа Н. Адонца.

YANUHI GARNIK BAGHMANYAN N. ADONTS'S LINGUISTIC HERITAGE

Thesis for PhD degree in Philology, speciality 10.02.01, «Armenian Language»

The defense will be held on 11 June, 2018 at 13:00, at the session of Specialized Council on Linguistics of 019 HAC
in the Institute of Language after Hr. Acharian NAS RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich St. 15)

SUMMARY

N.Adonts's merit is well-known within the scientific environments both in Armenia and abroad but mainly he is famous for his historic works, and the linguistic viewpoints and the great part of the works by the eminent Armenologist has not been examined and introduced thoroughly because of many subjective and political reasons. Foremost, N.Adonts's linguistic perceptions are generally introduced not in small and complete works, but are spread in numerous journals- Armenian, Russian, French and German, some of them are even handwritten, and some of them are in many repositories. Thus, the coordination and comprehensive introduction of N.Adonts's linguistic heritage is of utmost importance. The scientific innovation of our dissertation

is concerned with the above-mentioned condition: N.Adonts's life and activities, linguistic and etimological perceptions are coordinatively valued and combined for the first time. An attempt has been made to collect the linguistic views of the Armenologist, some of them are introduced in various studies in different paragraphs, connected with historic and philological studies, but their value is still undeniable. Ն. N.Adonts is one of the most outstanding scientists, who together with their talent and encyclopedical knowledge bridged the humanities, philology, historiography and lexicology.

The dissertation consists of two introductory parts entitled "Two Words" and "The History of the Question", which are followed by three chapters, each of them having their own subsections, conclusions and biographies. The Appendix is also attached to the work.

General information about N.Adonts's life, scientific, pedagogical and social activities are provided in the introductory part entitled "Two Words". The methodological grounds and sources of the formation of the dissertation are defined here. In the section "The History of the Question" upon numerous sources we have restored the overall image of N.Adonts's life and activities.

The first chapter of the work "N.Adonts's studies on Grammar and the issues of the Armenian Language History" consists of four subheadings, is entirely dedicated to Adonts the linguist, Armenologist and Urartologist. In this chapter the grammatical studies by N.Adonts are introduced, as well as the history of the 5th century, namely his interesting philological views of the history on the invention of the letters, which are based on Armenian and foreign sources.

In the third chapter "N. Adonts the specialist of toponyms and family names", N.Adonts's viewpoints on toponyms and family names related perceptions are coordinately introduced and valued.. The Armenian toponyms and family names are relatively less examined spheres, thus these types of works are quite precious.

The third chapter "The Etymology and phonology and lexico-grammatical examination" is about Adonts's unique etymologies and lexico-grammatial viewpoints. Here we touch upon the interesting etymological interpretations of the god names, proper names, common names, as well as spelling reforms, the studies on the formation of the Armenian letters, the unique definitions of the loan words.

The work is finished with the summary and bibliography.

Our dissertation also contains an appendix where the etimological explanation of foreignproper names and toponyms by N.Adonts are introduced,as well as the bibliography compiled by him, where we introduce the list of his workswhich we have found in Belgium and Armenia.

We have six articles published on this topic. And three more are in the process of being published.

As the most important merit of the works the creation of the website called “Nikoghayos Adonts” where we have compiled our articles about the scientist and his studies, bibliography, his works in foreign languages which were made digital in Belgium, and which have been unavailable so far. In this way we have tried to make simpler any type of information about the eminent Armenian scholar for bigger auditoriums.